

**ԱՂԱՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԱՐՔԵՏԻՊ Լ. ԽԵՉՈՅԱՆԻ
«ՍԵՎ ԳԻՐՔ, ԾԱՆՐ ԲՁԵՁ» ՎԵՊՈՒՄ**

Մարդը, էքզիստենցիալիզմի համաձայն, միակ էակն է, որ գիտի իր վերջավոր լինելու մասին և քայլ առ քայլ գիտակցաբար կրճատում է իր գոյության ժամանակը: «Մարդը, որ կրում է իր մեջ դիակն իր» (Օգոստինոս Երանելի)¹ մշտապես միայնակ է և միայնակ է եղել բոլոր ժամանակներում: Էքզիստենցիալիզմի դրույթներից մեկը, այն է՝ մարդը դավաճան աշխարհ է նետվել իր կամքից անկախ, ավելի է սրում, ծայրահեղացնում մենակության գաղափարը: Այն հաղթահարելու ձգտումն աշխարհի տարբեր անկյուններում և դարաշրջաններում ապրող մարդկանց նույնացնում է, մոտեցնում երբեմն չգիտակցված արքետիպին՝ Ադամին:

Մարդկային սահմանափակ ժամանակը հակադրվում և միևնույն ժամանակ տարրալուծվում է անչափելի, անվերջանալի ժամանակի՝ միֆական ժամանակի մեջ: «Ժամանակը ... կարող է հաղթահարել ինքն իրեն, դուրս գալ կոնկրետությունից և վերածվել «բացարձակ ժամանակի», որը միֆի մեջ հավասարվում է անշարժությանը»²: Միֆական և մարդկային ժամանակների համեմատության արդյունքը ևս մեկ անգամ մարդու՝ իբրև վերջավորի պարտության գիտակցումն է: Էքզիստենցիալիզմը սնող ակունքների մոտ կանգնած Բ. Պասկալը գրում է. «Ի՞նչ է մարդը Տիեզերքում: Չգոյություն՝ անվերջության հետ համեմատած, գոյություն ունեցող ամեն ինչ՝ չգոյության հետ համեմատած, միջին օդակ ամեն ինչի և ոչնչի միջև: Մարդը, սակայն, ի զորու չէ անգամ փոքրիշատե հասկանալու այս ծայրահեղությունները»³: Միֆի բացարձակ, չտարրալուծվող, չանհատականացված (առանձին անունների հոլովումը կամ պատմական իրադարձությունների անուղղակի մեջբերումը լոկ հնարք է՝ Լևոն Խեչոյանի կողմից կիրառված, ընդհանուրին մասնավորի պատրանք տալու համար) ժամանակը, Ադամի միայնության, մեղսավորության և անմեղության ըմբռնումները

1 Памятники средневековой литературы 4-9 веков. М., 1970, стр. 52.
2 Էդոյան Հ., Ծարժում դեպի հավասարակշռություն, Եր., 2009 թ., էջ 257:
3 Рыжакова Е.В. Одиночество как философская проблема. Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского. Серия Социальные науки. М., 2011, № 1 (21), с. 137.

«Սև գիրք, ծանր բզեզ» վեպի բանալիներն են:

Միայնությունը ժառանգաբար, հորից որդի, Ադամից Կայենին և Սեթին, Սեթից՝ Ենովսին, Ենովսից՝ Կայնանին ... , հանդապահության ժամանակ այրվող մասրենի տեսած «հեռուներից եկած ձերմակ սատանայից» Օնան Կարայանին փոխանցված «հիվանդություն» է: Ի ծնե մարդուն բաժին ընկած այս «խաչի»՝ միայնության «առաքելությունը» («առանձնացման հմայքը՝ ըստ Պասկալի) մարդուն ինքն իր հետ առերեսելն է, իրեն առանց դիմակի ձանաչել տալը, աշխարհի և կյանքի ունայնության գիտակցումը: Սակայն մարդը՝ ի սկզբանե մենակը, ըստ Պասկալի, փախչում է մենակությունից, ինքն իրենից, մոռացում փնտրելով տարբեր զվարճանքների մեջ, օրինակ՝ պատերազմների: Մենակությունից ազատվելու երկու եղանակ է Խեչոյանը հուշում՝ մոլեգին ձգտումը դեպի հողը և դեպի կինը: Նշեմ, որ չնայած վեպում հերոսների բազմանունությանը՝ նրանց երկու խմբի կարելի է բաժանել՝ տղամարդիկ և կանայք: Ընդ որում, Խեչոյանը (և ոչ միայն «Սև գիրք, ծանր բզեզ»-ում) կյանքը, կեցության գաղտնիքը զուգահեռում է միայն ու միայն կնոջ հետ, կինը՝ «Արգանդի անտակ խավարը խորհրդավոր»⁴:

Ի սկզբանե հողից արարվածը («Եւ Եհովայ Աստուածը հողի փոշուց շինեց մարդուն և նրա ոնգացը մէջ կենդանութեան շունչ փչեց, եւ մարդը կենդանի հոգի եղավ» - Գիրք Ծննդոց, Գլ. Բ, 7) իր նախաձևին վերադառնալու, ինքն իրեն վերագտնելու, ինքն իրենով՝ հողով, մենակությունը հաղթահարելու ցանկությամբ է փարվում հողին. «Հողին էլ եմ կարոտում՝ անարգել, համարյա անարգել, ուզում եմ լինել հողի մեջ»: Հետաքրքիր է, որ աստվածաշնչյան մարդ-հող զուգահեռը բառերի իմաստային մակարդակում էլ է իրացվում. «Ադամ» եբրայերեն նշանակում է «մարդ», իսկ այդ անվան իգական սեռը՝ «հող»:

Հողի հանդեպ անզուսպ ձգտումը մարդու՝ իր ձակատագրի անխուսափելիությունը գիտակցելու և ձակատագրին համակերպվելու, սիզիփոսյան անիմաստ աշխատանքից մի պահ հրաժարվելու, ժայռն ի վեր գերծանր քարը չբարձրացնելու արտահայտություն է նաև: Ֆրանց Կաֆկան իր «Օրագրերում» գրում է. «Ես իմաստուն էի, եթե կարելի է այդպես արտահայտվել, քանի որ պատրաստ էի մեռնել ցանկացած պահի, բայց ոչ այն պատճառով, որ կատարել էի իմ բոլոր պարտականությունները, այլ որովհետև չէի արել ոչինչ և չէի էլ հավա-

4 Խեչոյան Լ., Սև գիրք, ծանր բզեզ, Եր., 1999 թ., էջ 102: Այսուհետ գրքից արվող բոլոր մեջբերումների էջերը կնշվեն մեջբերման մեջ:

տում որևէ բան անելու հնարավորությանը»⁵:

Խեչոյանի համար հողից և կնոջից սպասված փրկությունները ինչ-որ կետում նույնանում են, չնայած նրան, որ հողը ավարտի և ֆիզիկական ու հոգեկան հանգստության, իսկ կինը շարունակության խորհրդանիշի արժեք են վեպում ստանում. «Կարաբինը ձեռքիս պառկել եմ հողի վրա՝ փորիս տակ շնչում, ազդրերիս արանքը սեղմվում, խլրտում է հողը, պառկել եմ նրա վրա, ինչպես սեփական կնոջ վրա են պառկում՝ որդեսերման սերմով բեղմնավորելու համար» (էջ 37):

Աստված, տեսնելով Ադամի մեղությունը, նրա համար կին արարեց: Կինը Խեչոյանի արձակում նախ և առաջ ֆիզիկական ամբողջականության հասնելու, միայնությունը հաղթահարելու ցանկության կրողն ու իրականացնողն է: Նա է, որ հերոսներին հնարավորություն է տալիս հաղթահարելու ֆիզիկական ու հոգեկան երկատումը, կրկակոխ հետապնդող հավերժական թախիծը, իսկ «Մարդու հավերժական թախիծը անկատարությունից է, միայնակ լինելու անզորությունից» (էջ 182): Սեփական կողից ստեղծված կնոջը գտնելը հավասարազոր է ինքն իրեն վերագտնելուն: «Սև գիրք, ծանր բզեզ» վեպի հերոսներից և ոչ մեկին չենք կարող երջանիկ և բավարարված համարել (բառիս բոլոր իմաստներով): Նրանցից յուրաքանչյուրը շարունակական որոնումների մեջ է, ինքն իրեն է տեսնում դիմացինի հայացքում ու կրկին հիասթափվում, բայց շարունակում է փնտրել Կնոջը՝ իր մարմնի կիսատությունը լրացնելու հույսով: «Հավել կնոջը՝ նրա տապը ձուլվում է մարմնիդ պաղին: Ծոյում է, գուրգուրանքը թուլացնում է ցավը: Վերադարձդ է: Ձգվել փորին՝ միանգամից քույր, մայր, կին է: Այդքան մերձավոր՝ ձուլվել» (էջ 85):

Խեչոյանի տղամարդիկ երկու տեսակի կանանց են ծանաչում՝ եվաների և լիլիթների: Մի ավանդության համաձայն՝ Լիլիթը հանդես է գալիս տարբեր կերպարանքներով: Նա ամեն կերպ փորձում է դյուրեթե տղամարդուն, տիրել նրան՝ նույնիսկ վերջինիս կամքին հակառակ՝ երեխա ունենալու հույսով⁶: «Հանկարծ Սրբուհին եկավ, հասավ ինձ մոտ: ... Արագ, առանց դադարի խոսում է. «Օնան, օրինակ ինչի՞ համար պիտի քեզից երեխա չունենամ: Ինչքան էլ դու ուրիշ կնոջ հետ ես ամուսնացած, ընկերուհիներս ասում են՝ վերջիվերջո երեխան Օնանի նման մեծ մարդուց կլինի: ... Ասում են՝ կանացի խաղերով հի-

5 Кафка Ф., Дневники (<http://book-online.com.ua/read.php?book=5283&page=24>).

6 Стів Мифы народов мира. М., 1992, т. 2, стр. 55:

շեցրու Օնանի՝ ջահել ժամանակ քեզ սիրահարված լինելը...» (էջ 30): Եվան մեկն է, Լիլիթները՝ մի քանիսը, ու երբեմն դժվար է պարզել մեջդ արթնացած արյան խլրտոցը Եվայի՞ն է հիշել, թե՞ Լիլիթին. «Այդպիսի օծանելիք լինում է, որ աղջիկն օծվի ու նրանից հեռու ժամանակից վերադարձած, ծանոթ մարմնի հոտ գա, - ասաց, - հիմա էլ էդ բուրմունքը մեջս կանգնել, մնացել է, միանգամից ամեն տեղ է» (էջ 128): Կամակոր Լիլիթին իր կողքին պահելու անկարող Օնան-Ադամը, որ, թվում է, այդպես էլ չի գտնելու իր կիսատությունը լրացնող Եվային, օրըստօրե ավելի է օտարանում կնոջից. «Մեր միջև մութը չէր հաղթահարվում, վերմակը չէր հաղթահարվում, շնչառությունը չէր հաղթահարվում» (էջ 53):

Օտարումը կնոջից օտարում է ինքն իրենից, ֆիզիկապես և հոգեպես ամբողջական լինելու ձգտման խափանում է: Օտարվելու մշտարթուն զգացողությունը, ըստ էքզիստենցիալիստների, ցանկության և իրականության անհամապատասխանությունից է (նույն դրույթը հանդիպում է նաև Ծոպենհաուերի, Նիցշեի մոտ). եթե անգամ ցանկությունն իրականանում է, շոշափելի փաստն անչափ հեռու է սպասվածից և բավարարում չի բերում մարդուն: Մահկանացուի սովորական վիճակը, այսպիսով, չբավարարվող ցանկությունների, սպասումների մեջ տապակվելն է: «Իմ գոյության փաստի և այն իմաստի միջև, որ ես ջանում եմ հաղորդել, այնպիսի խորխորատ գոյություն ունի, որն անհնար է լցնել: Ես միշտ ինձ օտար կմնամ», - գրում է Կամյուն⁷:

Միայնությունը՝ իրենց մեջ մշտարթուն Ադամին, հաղթել, շրջանցել փորձողները, այնուամենայնիվ, ինչ-որ անբացատրելի քմահաճույքով մենակության են ձգտում՝ տարիներով, դարերով վաստակած խաղաղությանը: Միայնությունն այլևս վեր է ածվում մյուսների համար ցանկալի խելահեղության. «...նրա մենակությունը խելահեղության պես մի բան էր դառնում» (էջ 198) և «...շատ հնարավոր է, որ նրա խելագարությունը ձյնարտությունից անդին է, ինչը մենք որոնում ենք...» (էջ 109): Եթե միայնությունը ի ծնե է տրված և նախորդել է մեր գոյությանը, ապա մենք այդպիսով վերագտնում ենք մեզ:

Ադամը ոչ միայն օրերի միջով հետապնդող միայնության, այլև անմեղության արքետիպն է: Միակը, որ ծնվեց առանց մեղքի: Ճաշակելով չարի և բարու ծաղից՝ առաջին բանը, որ զգաց, ամոթն էր: Լևոն Խեչոյանի վեպում պարբերաբար հանդիպող զգացողությունն է դա.

7 Կամյու Ա., Միզիփոսի առասպելը (էսսե արքայի մասին), Եր. «Ապոլոն», 1995 թ., էջ 26:

«Ամոթ է: Ամաչում եմ, եթե ամոթ չլինեիր...» (էջ 136): Մեղքի զգացումը շարունակաբար հետապնդում է հերոսին: Սա ծագում է այն պատճառով, որ Օնանը չի կարողանում ձիշտ գնահատել իրավիճակները և անցկացնելով սեփական արժեհամակարգի միջով՝ համաձայնեցնել խղճի հետ: Հերոսն առերեսվում է իր կողմից այլևս կատարված գործողությանը՝ իբրև անհերքելի, անուղղելի փաստի, և համակվում փակուղու, հուսահատության, անխմաստության և անտանելի ծանրության զգացողությամբ: Սա, ըստ Պոպովայի, բնորոշ է կեցության առեղծվածին առնչվող մարդուն⁸:

Մոդեռնիստական, մասնավորապես՝ էքզիստենցիալիստական գրականությանը բնորոշ է միֆերի վերաիմաստավորումը (Սիգիֆուսի, Տանտալոսի մասին առասպելները և այլն): Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում միահյուսվում են Փոքր Միերի և Ադամի միֆերը՝ ստեղծելով նոր առասպել մեղքի մեջ թաթախված մահկանացուի անմեղ դառնալու մասին: «Ես միանգամից դարձա ծանր: Ես ինձանով ծակում էի հողագունդը» (էջ 75), «Նրանով դառնալու էինք մեկընդմիջտ կապանքված՝ ծանր, մի գերծանր բան՝ հողագնդի վրա ընկած» (էջ 37): Խեչոյանական հերոսների մեղքերից «ծանրանալը» սովորաբար զուգահեռվում է Փոքր Միերի միֆի հետ: Այս կերպարի ներկայությունը, հաճախ ենթագիտակցական, իր երկերում Խեչոյանն էլ է խոստովանել: Այսպես, «Խնկի ծառեր» վիպակում Միերը որպես կերպար հանդես չի գալիս և չի էլ հիշատակվում, բայց հեղինակի տված հարցազրույցից պարզ է դառնում, որ ողջ վեպը կառուցված է հենց Միերի խոսուն բացակայության կամ անտեսանելի ներկայության վրա. «...այնտեղ մի ես՝ մի հերոս կա, - ասում է Խեչոյանը, - որ բոլոր սերունդների հետ ապրում, ոՐ՛չ մեռնում է, ոՐ՛չ էլ ծերանում՝ ինչպես ժամանակը: Որ դիտենք, էպոսի Միերը կերևա, թե արևամուտի մեջ ինչպես էր մենամարտում Աստծո հրեշտակի հետ, իսկ քիչ հեռվում՝ ծփացող Վանա լճի վրա, ձկնորսներն իրենց գործին, ծնկները նավակների կողերին հենած՝ ուռկաններն էին նետում ալիքազարկ, ձերմակ ջրերը... Անգամ Աստծո հրեշտակի հետ պատերազմելուց հետո, պարտված փակվել էր Ագոստինոսի մոտ, այնտեղ է ՆԱ՝ Հայոց Ավետարանը»⁹:

«Սև գիրք, ծանր բզեզ»-ում Փոքր Միերին զուգահեռ գծագրվում է նաև Ադամը: Ետաստվածաշնչյան մեկնություններից մեկում Ադամն

իբրև հսկա է հիշատակվում, որի մարմինը ձգվում էր երկրից մինչև երկինք, սակայն չարի ու բարու ծառից ճաշակելուց հետո նա կարճահասակ է դառնում: Փոքր Միերը, խոսվելով ինքն իրենից ու աշխարհից, տեսնելով, որ երկիրն այլևս ի զորու չէ տանել իր ծանրությունը, փակվում է Ագոստինոսի մոտ՝ սպասելով ավելի լավ ժամանակների: Իսկ ահա հսկա Ադամը փոքրանում է՝ երկիր քշվելուց առաջ: Այսպես, հերոսները մեղքերից ծանրանում են՝ հիշեցնելով Փոքր Միերին՝ հսկային, որ ինքն իրեն ֆիզիկական մենակության դատապարտեց: Դառնալով հսկա, որն «իրենով ծակում է հողագունդը», հերոսները հիշեցնում են նաև Ադամի մասին միֆը. քանի դեռ չէր ճաշակել մեղքը, մարմինը երկրից երկինք էր ձգվում: Հսկա Փոքր Միերը նույն Ադամն է՝ մինչ երկիր քշվելը: Փոքր Միերի միայնությունը, որին ինքն իրեն դատապարտեց, նույն Ադամի միայնությունն է: Խեչոյանի՝ միայնության դատապարտված հերոսները, այսպիսով, մեղքերից գերծանր դառնալով, վերագտնում են Ադամի անմեղությունը:

Կերպարները իրենց ժառանգած մեղսունակությամբ («Մարդը մեղսավոր է ի սկզբանե» - Հայդեգեր), մեղքի գիտակցմամբ ու դրանից ազատվելու ցանկությամբ մոտենում են առանց մեղքի արարված և մեղքի մեջ նետված միայնակ մարդուն: Թե՛ մեղսագործելու, թե՛ մեղքից ազատվելու փորձերը դեպի Ադամն են տանում: Մի տեսակ պտույտ է «ի շրջանս յուր», որ ավարտվում է նույն կետում: Նախասկիզբը գիտակցված ու չգիտակցված Ադամն է՝ անմեղության արքե-տիպը, առանց մեղքի ծնվածը, մեղքերի միջով անցածն ու, որ ամենից կարևորն է, անմեղ մնացածը. «Անցնել բոլոր մեղքերի միջով և անմեղ մնալ» (էջ 186):

Այսպիսով, Ադամի կերպարը՝ իբրև միայնության, անմեղության և մեղսավորության անխառն խտացում, աննկատելիորեն սողոսկում է գեղարվեստական տեքստ՝ տարբեր զարգացումների, զուգահեռմաների տեղիք տալով: Ադամի՝ իբրև արքետիպի ընտրությունը պայմանական բնույթ է կրում. տարածաժամանակային այլ հարթությունում այս կերպարին մեկ ուրիշը կարող է փոխարինել: Առաջնայինը վերը քննված էքզիստենցիալիստական հիմնական դրույթներին համապատասխանելն է: Լ. Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում իր գոյության հետ առերեսվող և այն կորցնելու սահմանային իրավիճակում հայտնված Ադամ-մարդն առավել խորն է զգում իր միայնությունը, անկատարությունը, մշտապես մեղքի հետ հարաբերակցվելու անխուսափելիությունը և ինքն իրեն հասկանալու, գոյության իմաստը վեր հա-

8 Стів Попова О. Ф., Динамика переживания вины в экзистенциальном анализе (HTTP://HPSY©RU/PUBLIC/X5868©HTM):

9 «Գրական թերթ», 2004 թ., թիվ 36:

ներու ուղիներ փնտրում: Խեչոյանը Արցախյան պատերազմ տեսած իր սերնդակիցների և անկախության անցումային փուլը հաղթահարած կրտսեր գրչակիցների հետ գրականության մեջ էքզիստենցիալիստական տրամադրությունների մի նոր երակ է բացում, որի տիպիկ արտահայտությունն է այս վեպը:

Բանալի բառերը` էքզիստենցիալիզմ, միայնություն, անմեղություն, մեղք, Ադամ, արքետիպ, առասպել:

Резюме

Рузанна Восканян

Адам, как архетип одиночества и невинности в романе

Л. Хечояна "Черная книга, тяжелый жук"

Данная статья посвящена анализу двух важных положений экзистенциализма: одиночества и чувства вины, в романе Левона Хечояна "Черная книга, тяжелый жук". Автор статьи рассматривает Адама в качестве архетипа греховности, невинности и одиночества. Проводится параллель между эстетикой Хечояна и эстетикой экзистенциализма.

Summary

Ruzanna Voskanyan

Adam as Archetypal of Loneliness and Innocence in L. Khechoyan's Novel «Black Book, Heary Beetle»

This article explores two important provisions of existentialism - loneliness and guilt in the novel of Levon Khechoyan "Black Book, Heavy Beetle." The author of article considers Adam as the archetype of sin, innocence and loneliness. Parallels are shown between aesthetics of Khechoyan and existentialism.

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱԼ

Բ.Գ.Դ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՇԱԳՈՐԾԸ

Վերջերս հոդվածումս մեջբերում անելու համար բացեցի Բորիս Պաստերնակի բանաստեղծությունների հատորը, գտա ինձ անհրաժեշտ տողերը, բնականաբար աչքի անցկացրի ևս մի երկու բանաստեղծություն և գիրքը չկարողացա ցած դնել: Կարդում էի ու հոգիս հրձվում էր պոեզիայի սիրով: Հասկացա, թե ինչ վիթխարի երևույթի հետ գործ ունեմ: Անտարակույս, Բլոկից հետո եկած ոուս պոետներից Պաստերնակն ամենաուժեղն է: Նա գալիս է այն ակունքից, որի անունն է Պուշկին, ապա Տյուտչև, Ֆետ, Բլոկ:

Հավատարմություն պոեզիայի դասականությանը` հանգավորման բյուրեղյա մաքրություն, սակայն պետք է ընդգծել, որ Պաստերնակի պոեզիայի համար հանգավորումը, բանաստեղծության տեխնիկան չի խաղում առաջատար դերը, առաջնայինն այստեղ ասելիքը, միտքն է: Հեղինակի հոգեվիճակի բացահայտումը, նրա բարդ խոհերի արտացոլումը խոսքի արվեստի միջոցով: Պաստերնակն ունի իր յուրահատուկ ձեռագիրը, բառերի իր զինանոցը, պատկերման իր առանձնահատկությունը, երբ ոչ թե ներկայացնում է առարկայի պատկերը, այլ առարկայի էությունն է բացահայտում, ուր յուրաքանչյուր խոսքն ունի իր արժեքը: Նա առավել գոյականի և բայի վրա է իջեցնում բանաստեղծության հիմնական ծանրությունը: Եվ յուրաքանչյուր գոյականն ունի իր արժեքը, յուրաքանչյուր բայ գիտե իր անելիքը: Պաստերնակի մոտ քիչ կհանդիպեք ածականների, անգամ եթե դրանց կարիքն զգացվում է, նա այն հմտորեն շրջանցում է, զորակոչելով հենց ածական դարձած իր պատկերը: Պատկերաստեղծման մեծ վարպետ է Պաստերնակը: Վերջին հաշվով, պոեզիան խոսքի, բառի միջոցով արվեստ ստեղծելու վարպետություն է: Եվ ինչպես յուրաքանչյուր պատկեր իր տեղում կարծես մարդու հոգեկան աշխարհի բացահայտման բանալի է, այնպես էլ նրա յուրաքանչյուր բանաստեղծությունը, բանաստեղծական տողը հեղինակի կերպարի մի մանրակերտն է, նրա կենսագրության կարևոր մի շտրիխ: Բանաստեղծի արվեստը հսկա-